

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ**ՏԵԼԻՉԵԱՆ ԽՆԴԻՐԸ****ԺԵ.****Ս. ԳԻՐՔ ԵՒ ԲԱԲԵԼՈՆ**

Բաբելացւոց եւ ասորիներու աստուածները կը տեսնեն եւ կը լսեն ամէն բան: Իրենց հայեացքը կը թափանցէ ամէն գաղտնիքի, անհատներու եւ ազգերու ճակատագիրը անոնք կը նախատեսեն: Ամէն մարդ ամէն ընկալէ կրնայ անոնց շնորհին արժանանալ, բաբելացիին հաստատ համոզուած է, որ աստուածները իր աղօթքը կը լսեն, եւ հետեւեալ տողերը, որոնք ասորական աղիւսի մը վրայ գտնուած են, պերճախօս կերպով կ'արտայայտեն այս հին ժողովուրդներու աղօթքի մասին ունեցած բարձր ըմբռնումը.

«Աղօթք, պաղատանք եւ երկրպագութիւն, պէտք է դուն առաւօտեան մատուցանես անոր, այսպէսով կը զօրանաս դուն,

Եւ աստուծով ամէն դժուարութեան կը յաղթես»:

Մարդս իր ծննդեան օրէն մինչեւ իր մահը աստուածային շնորհէ կախուած է, այս պատճառով ան բարեպաշտ պիտի ըլլայ: Նորածին տղաք եւ աղջիկներ աստուծոյ պարգեւը կը համարուին եւ անոր օգնութեամբ կ'աճին: Ինչպէս որ Յոբայ Գիրքին մէջ (ԺԴ. 6) ըսուած է Եհոնէի մասին, «Դարձո՛ւր հայեացքդ մարդէ եւ ան կ'ոչնչանայ» նոյնպէս ալ սեպագիր արձանագրութիւնները կը գրեն, «Եթէ դուն ողորմած աչքով դիտես մարդս, ո՛վ աստուածուհի, ան կ'աճի եւ կը բարգաւաճի», կամ «ուր դուն քաղցրութեամբ նայիս, մեռեալը կը կենդանանայ եւ հիւանդը կ'առողջանայ»: Ամենէն ընտիր մաղթանքը, որ բաբելացի քահանայ մը կրնար ընել հիւանդին, էր «Քու, աստուծոյ ողորմած ձեռքերուն կը յանձնեմ քեզ»:

Ուրեմն չնայելով բաբելական բազմաստուածեան՝ կրօնա-բարոյական խնդիրներու նկատմամբ շատ մեծ նմանութիւններ կան երկու կրօններուն մէջ: Նոյնիսկ զոհերու նկատմամբ մենք զարմանալի նմանութիւններ կը գտնենք երկու կրօններու մէջ: Յովսիա եւ Եսայի յաճախ կը յայտարարեն որ Աստուած զոհ չուզեր, այլ սէր. նոյն զգացումը կը գտնենք մենք բաբելացիներուն քով.

«Ամէն օր աղօթէ՛ քու աստուծոյդ, մաքուր խօսքը ամենէն արժանաւոր խոսնկն է.

Անկեղծ պիտի ըլլաս աստուծոյդ նկատմամբ:

Ամենէն աւելի այս է հաճելի աստուածութեան»:

Եթէ բաբելացիք այսքան մաքուր կրօնա-բարոյական համոզումներու եւ ըմբռնումներու տէր էին, ինչպէ՞ս պէտք է բացատրել անոնց բազմաստուածութիւնը:

Դիւրին բան չէ պատկերացնել Քրիստոսէ մօտաւորապէս 5000 տարի առաջ Միջագետքէն դէպի հարաւ իջնող սեմական ցեղերու հոգեկան եւ զարգացման վիճակը: Այսքանը միայն յայտնի է, որ անոնք ենթարկուեցան սումերներու քաղաքակրթական ազդեցութեան: Սեպագիր արձանագրութիւնները մեզի սումերներու եւ բաբելացիներու յարաբերութեան մասին հետեւեալ խիստ հետաքրքրական ծանօթութիւնները կու տան:

Եփրատ եւ Տիգրիս գետերու ամենէն հարաւային ընթացքին կողմը, ուր միանգամ խոր եւ բարձր եղեգնուտներու միջով հոսելով կ'անցնին անոնք, Բաբելոնէն ալ դէպի հարաւ մինչեւ Պարսից Ծոցը, հին ատեններ կը բնակէին Սումերացիք: Այս ժողովուրդը անվեհեր կերպով մաքառեցաւ ջուրի հոսանքներուն եւ արեւի կիզիչ ճառագայթներուն դէմ եւ մշակեց երկրագործութիւնն ու անասնաբուծութիւնը եւ դարձեալ մարդկային քաղաքակրթութեան կարապետը: Անոնք տեսան ու դիտեցին մէկ կողմէն անսահման եւ անքննելի ծովը, միւս կողմէն երկու գետերու յաճախ կորստաբեր հոսանքը: Երկրի պտղաբերութիւնը, արեւի կանոնաւոր շրջանառութիւնը, լուսին եւ լուսաւորները, վերջապէս ամէն բան անոնց խորհրդաւոր եւ գերբնական կը թուէր: Երկինքի բարձունքէն սկսեալ մինչեւ երկրի խորերը, ամէն ինչ Աստուծոյ խորհրդաւոր էութեան մարմնացումն էր: «Ամէն ինչ կը ցուցնէ միեւնոյն Աստուծոյ հետքը» կ'ըսէին, եւ աստուածութիւնը յաճախ կ'անձնաւորէին անոնք: Մարդկային ընտանիքի կամ յարաբերութեան ձեւը կու տային աստուածներուն: Անոնք իգական կամ արական սեռի աստուածութիւններ էին: Անոնցմէ մեծագոյն մասը ծնունդ էր զոյգ մը կամ շարք մը աստուածներու: Սումերներ այնպիսի աստուածներու կաճառ մը ունէին, ինչպէս յոյներն ու հռովմայեցիները: Անոնք ալ գիտէին որ արեւի աստուածը ամեհի եւ անխոնջ ձիերէ լծուած կառքի մէջ նստած կը շրջագայի. հոս ալ աստուածները իրենց խորհրդանշանները ունին: Այսպէս, զորօր. Մարտուքի խորհրդանշանը՝ նստած, լեզուն դուրս ճօճող եւ գլխուն վրայ երկու եղջիրներ կրող պոչաւոր, ոչխարանման կենդանի մ'է, մինչ Էայինը՝ այծածուկ մը, որ աղբիւրի խորհրդանշանն է: Բաբելացիք ու սումերացիք ամենուրեք աստուած տեսնել կ'ուզէն, ոչ միայն երկնային մարմիններու շարժման, այլ եւ թռչուններու թռիչքին եւ ծառերու շարժումին մէջ: Անոնց հոգին ալ շարունակ կը փնտռէ զայն, կը ճգնի հետազօտելու անոր էութիւնն: Բայց որքան ալ յունաց փիլիսոփաներու պէս բաբելացի իմաստուններն ալ առանձին աստուածութեանց բազմատեսակութեան արմատն եղող միութիւնը կ'ըմբռնէին, անոնք կրօնական միաստուածութեան գաղափարին երբեք չկրցան հասնիլ: Այս տեսակետէն անկարելի է Բաբելոնն ու Ս. Գիրքը երբեւիցէ հաշտեցնել:

Այդ դաշտերուն եւ անապատներուն տէր ըլլալու համար հարկաւ բաբելացիք ամուր վարչական կազմակերպութիւն մը պիտի ունենային: Բաբելոնեան առած մը կ'ըսէ. «Մարդս աստուծոյ ստուերն է, գերին՝ մարդուն, իսկ իշխանը՝ աստուծոյն հաւասար է»: Այս է պատճառը, որ Սարկոն Ա.-ի որդին Նաբամսին ինքզինք «Ակատէի աստուած» կ'անուանէ. ուրիշները «Բէլի պատկեր» տիտղոս կը կրեն: Որքան ալ աստուածները բազմաթիւ եւ բազմապիսի անուններ ունենան, այնու ամենայնիւ անոնք միեւնոյն իմաստն ու նշանակութիւնը կը պահեն Իլու բառով: Այս բառը որ աստուած կը նշանակէ, միւս բոլոր տարբերութիւնները կը բառնայ: Յայտնի չէ թէ սումերացիք աստուածութիւնը ո՞ր շաստուածներով կը ներկայացնէին. բայց անոնց քաղաքակրթութիւնն իւրացնող սեմական ժողովուրդներ՝ իրենց կարողութեան չափով մասնաւոր գործունէութեան շրջանակ մը կը գծէին: Այն աստուածը, որ իսրայէլացիք Եահուէ կ'անուանէին, մովաբացիք՝ Քամմօշ, իսկ ամմոնացիք՝ Միլֆօմ կը յորջորջէին: Բայց անոնցմէ իւրաքանչիւրը կ'ընդունէր, որ իրենց աստուածը միւսներէն տարբեր էութիւն մ'է: Այս կ'ուսուցանէ մեզ նաեւ Ս. Գիրքը Հռութայ Գիրքին մէջ: Հոս ալ իւրաքանչիւր ժողովուրդ իր աստուածն ունի, այսպէս օրինակ Հռութի Ներ-Որփա «իր ժողովուրդին եւ իր աստուածներուն» կը դառնայ (Հռութ, Ա. 15). մինչ Հռութ կ'ըսէ Նոյեմիին, «քու ժողովուրդդ իմ ժողովուրդս թող ըլլայ եւ քու Աստուածդ իմ Աստուածս» (Հռութ, Ա. 16): Այս

հաւատքը կը տիրէ ռամիկ ժողովուրդին մէջ, նոյնը կը կրկնուի հրեայ պատմաբաններու եւ Երեմիայի, Նսայիի պէս մեծ մատենագիրներուն քով:

Նախաքրիստոնէական շրջանի սեմական բոլոր ժողովուրդները իրենց աստուածներէն մէկը զարդարած են գերագոյն ոյժերով: Ասորիները եւ ասորեստանցիք, որոնք Քրիստոսէ մօտ 2500 տարի առաջ իրենց երկրին մէջ մեծ պետութիւն մը հիմնեցին, պահելով բաբելոնեան պանթէոնը, անփոփոխ թողուցին նաեւ իրենց ազգային աստուածը զԱսուր, զոր իրենք Աշիւր կամ Աշուր կ'անուանեն եւ «սուրբ», «ինքնածին», «սկզբնապատճառ», «հայր, տէր եւ թագաւոր» եւ նման մակդիրներ կու տան անոր: Եթէ Սաղմոսի մէջ (ՃԼԶ. 2) Եահուէի համար կ'ըսուի «Աստուած աստուծոց եւ Տէր տէրանց», այսպէս ալ Ասուր կ'անուանեն զայն պաշտողները. եթէ Յորդանանի ափերուն, «Աստուածներէն ո՞վ կը նմանի Եահուէին» հարցումը կը լսուէր, «Աստուածներէն ո՞վ կը նմանի Ասուրին», կը կանչէին ասորեստանցիք: Անոնց իշխանները ասուրի քահանաներ կը համարուէին: Աստուածութիւնը սեփականացնելու այս սովորութեան անմիջական արդիւնքն եղաւ այն համոզումը, որ իւրաքանչիւր ժողովուրդ միմիայն ինքզինք Աստուծմէ ընտրեալ կը համարէր: Յայտնի է արդէն՝ թէ Հին Կտակարանի Հրեաները ո՞րպիսի ատելութեամբ կամ արհամարանքով վերէն վար կը նայէին միւս ժողովուրդներուն վրայ: Այսպէս ալ Ասորիներ իրենք զիրենք ընտրեալ կը սեպէին, բայց միւս ժողովուրդները չէին արհամարեր: Անոնց կարծիքով Ասորեստան այն երկիրն էր, ուր Ասուր աստուածը իջած եւ իր բնակավայրը հաստատած էր:

Այս ազգային աստուածը իր ժողովուրդին հետ դաշնագրութիւն կը կնքէր, որ Իսրայէլի մէջ նոյնիսկ ծիրանի գօտիի եւ այլ նշանով կը յայտնուի (տե՛ս Ծննդ. Ժէ. 10-14): Ան կ'ատէ իր ժողովուրդն ատողը եւ կը սիրէ զայն սիրողը. այս պատճառով Իսրայէլի թշնամիները ինքնըստինքեան նաեւ Եահուէի թշնամիներն են (տե՛ս Սաղմոս 29. եւ Հմմտ. Ելից ԻԳ 22): Ասուր ալ ասորեստանցիներու թշնամիներուն դէմ կը պատերազմի, ինչպէս Իսրայէլի «Տէր Սեբաւովդ»-ը: Այս պատճառով ասորական հնադարեան քարաքանդակներուն մէջ յաղթական զօրավարի կամ իշխանի գլխուն վրայ փորագրուած է միշտ Ասուրի պատկերը, որ սովորաբար երկար մօրուքով, երկար մազերով լայնալիճ աղեղը ձեռքին եւ սպառազէն անձ մը կը ներկայացնէ: Անոր պատկերը յաւիտենականութիւն նշանակող բոլորածեւ շրջանակի մը մէջ առնուած է (Հմմ. Սղմ. ԺԸ. 11, Լե. 22.): Սաղմոս է. 12-ի մէջ կ'ըսուի Եահուէի համար, «որ ան ... իր սուրը պիտի սրէ եւ աղեղը լարեր պատրաստեր է», Սաղմ. ԻԱ. 12. «Քու նետերդ անոնց դէմ աղեղիդ վրայ պիտի պատրաստես», այսպէս ալ աղեղով եւ սուրով պատերազմի կ'ելլէ Ասուր: Ինչպէս Եահվէ Սաղմ. ԺԸ. 10 «Քերովբէի մը վրայ կ'ելլէ կը սլանայ», այնպէս ալ Ասուր ցուլի մը վրայ աղեղնալար կը խոյանայ եւ կը կռուի իր ժողովուրդին թշնամիներուն հետ:

Սեմական ժողովուրդներուն քով խոր արմատներ ձգած էր այս համոզումը: Իւրաքանչիւր երկրի աստուած պէտք է պաշտուէր իր երկրին մէջ: Հին Կտակարանը երկու բարացուցական օրինակներ ունի այս տեսութեան ճշգրտութիւնը ցուցնող. Դ. Թագ. Ժէ. 25-28 կը պատմուի, որ Բաբելէ (Բաբելոն), Քութայէ եւ Համաթէ (Եմաթ) Սամարիա գաղթող ժողովուրդները «Եահուէէ չէին վախնար», «երկրին աստուածը չէին ճանչնար», ասոր համար Եահվէ անոնց դէմ զրկեց առիւծներ, մինչեւ որ Բաբելոն գերի տարուած քահանաներէն մէկը վերադարձաւ եւ զանոնք մարզեց Աստուծոյ սիրոյ մէջ: Նոյնը ըրաւ Սարկոն Ա. Բաբելոն գերի տարուող ժողովուրդներու նկատմամբ: Անոր հրամանով քուրմերը քարոզեցին եւ ուսուցին անոնց ասուրի կրօնը: Վերոյիշեալ Գիրքի Ե.-րդ

գլուխին մէջ ալ կը պատմուի, որ Նէէմա (Նաաման) ասորի զօրավարը հիւանդութիւնը բուժուելէ ետք երբ հայրենիք վերադառնալ կ'ուզէ, որովհետեւ Նահուէի հաւատացող մըն էր, անոր երկրի հողէն այնքան կ'առնէ, որքան կրնար երկու ջորի տանիլ, որպէսզի անոր վրայ պաշտէ զայն: Այս վերջին պատմութիւնը մեզի համար խիստ կարեւոր է եւ մինչեւ օրս ուշադրութեան չէ արժանացած՝ բացատրելու համար նման պատմական երեւոյթներ:

Այս կրօնական համոզումն էր պատճառը, որ Բաբելոն տարուող կամ գաղթող ցեղերը անմիջապէս հին սումերական կրօնը ընդունեցին: Այս պատճառով Թէրա կռապաշտ էր եւ Նսթերը սնուցանող Մուրթքէն (=Մարտոքայ) չնայած իր հօրմէն, հրեայ ըլլալուն, Մարտուք=Բէլ աստուծոյն նուիրուած էր: Քանաանի մէջ բնակող իսրայէլացիք ինկան Բահուլի եւ Աշէրաներու պաշտամունքին մէջ եւ նոյնիսկ Նսայի եւ իր նախորդները իրենց սպառնալիքով եւ բոցավառ ճառերով չկրցան ազդել անոնց վրայ: Սամարիոյ եւ Յուդայի բնակիչները Բաբելոն տարուեցան եւ շատերը հոն ոչնչացան, իսկ մնացողները Կիւրոսի օրով, 539-ին Քրիստոսէ առաջ, իրենց երկիրը դարձան եւ իրենց տաճարը շինեցին: Չնայելով Սաղմ. 26 1-3-ի մէջ արտայայտուած եւ Իսրայէլի Նահուէի վրայ դրած յոյսերուն Անտիոքոս Դ. Նպիփան տաճարը կործանեց: Մակաբայեցիներու յաղթութեամբ կրկին անգամ վերարձածեց Նահուէի վրայ դրուած յոյսերը (տե՛ս Սաղմ. ԼԳ. 12, Ճ. 116, ՃԽԴ.), բայց այդ ալ ուրիշ անյաջողութիւններով ի դերեւ ելաւ: Մինչեւ որ Յիսուս Քրիստոս գալով վերջ տուաւ բոլոր սնոտի յոյսերուն եւ հիմնեց իր սիրոյ վրայ հաստատուած եկեղեցին:

Կէօթէ ըսած է, որ «Մարդկային հոգին աւետարաններու մէջ արտայայտուած քրիստոնէութեան վեհութեան եւ բարոյական քաղաքակրթութեան սահմանները բնաւ պիտի չանցնի»: Ամէն պարագայի մէջ ասորա-բաբելական գրականութեամբ զբաղող բոլոր գիտնականները շատ ուրախ են եւ հիացմամբ կը կարդան Աւետարանի այն հատւածը, որ ամենէն առաջ բաբելացի իմաստուններ իրենց ընծաները կը մատուցանեն օրօրոցի մէջ գտնուող Քրիստոսին:

Կը վերջացնենք Տելիշեան Խնդիրը ընդհանուր առմամբ այլեւայլ գիրքերէ քաղուած հատուածներով կամ մեր կողմէն եղած տեսութիւններով բաւական ընդարձակելով Տելիշի առաջին եւ երրորդ դասախօսութիւնները, զորս տեղ-տեղ գրեթէ բառացի թարգմանեցինք առանց իր բոլոր եզրակացութիւններու հետ համաձայնելու: Կը յուսանք եւ վրստահ ենք՝ որ լրջամիտ եւ ուշիմ ընթերցողներուն օգտակար եղաւ յօդուածս եւ անոնց մտաւոր հորիզոնը զգալապէս ընդլայնեց, արծարծելով անոնց մէջ Ս. Գիրքի շուրջ տարածուած գիտական խնդիրներու նկատմամբ կենդանի հետաքրքրութիւն, որով մենք ալ մեր նպատակին, այսինքն ամենէն առաջ ճշմարտութեան ծառայելու հասած պիտի ըլլանք:

ՏՕՔԹ. Յ. ԹՕՓՃԵԱՆ

Բերա - Կ. Պոլիս, 1906

(Վերջ)